Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«12» հունիսի 2014 թ. թիվ 65 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____ Ա. Սարգսյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Երևան 2014

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնակարգով սահմանվում են մագիստրոսական կրթական ծրագրեր իրականացնող Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ԳԱԱ ԳԿՄԿ) մագիստրատուրայի հեռակա բաժնի ընդունելության պայմանները:

1.2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կրթության և Գիտության նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ»-ը, ԳԱԱ ԳԿՄԿ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

1.3. ԳԱԱ ԳԿՄԿ հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձինք:

1.4. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի նախագահությամբ ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ փոխտնօրենի, ուսումնամեթոդական մասի պետի, դեկանի, գիտքարտուղարի, ուսումնամեթոդական մասի առաջատար մասնագետի և ուսումնամեթոդական մասի այլ աշխատակիցների կազմով: Քննությունների անցկացման համար ԳԱԱ ԳԿՄԿ տնօրենի հրամանով ձևավորվում են քննական հանձնաժողովներ, որոնց կազմում են տվյալ ամբիոնի վարիչը և դասախոսները:

2. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2.1. ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրատուրա վճարովի համակարգ կարող են դիմել սույն կանոնակարգի 1.3. կետում նշված անձինք, որոնց ընդունելությունը կատարվում է մրցույթային կարգով՝ հարցազրույցի կամ ընդունելության քննության միջոցով:

2.2. Մասնագիտության փոփոխման դեպքում հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունվելու համար դիմորդների ընդունելությունը կատարվում է քննության միջոցով:

2.3. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- 2.3.1 Մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ:
- 2.3.2 բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճեններ.
- 2.3.3 4 լուսանկար (3x4 չափի).
- 2.3.4 զինվորական գրքույկի բնագիրն ու պատճեն (առկայության դեպքում).
- 2.3.5 ընդունելության ծառայությունների համար գանձվող 3000 դրամի վճարի անդորրագիր:

2.4. Հեռակա ուսուցմամբ ընդունելությունը սկսվում է հունիսի 27-ից մինչև սեպտեմբերի 20-ը:

2.5. Հեռակա ուսուցմամբ մագիստրատուրա ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական ծրագրերի: